

ՍԱՐԳԻՍ ՎՐԴ. ԿԵՄԼԷՅԻԿՅԻ.— Մբ. 1873ին:

ՍԱՐԳԻՍ ՎՐԴ. ԿԻՊՐԱՅԻ.— Մբ. Կնիքը 1751. Նև. Հընդ-կաց 1794ին. պատուիրակ վանական գործերու 1813ին, կը վախ-ճանի (1834, Զատկին). ընդօրինակած է նամակներու հաւա-քածոյ մը և յիշատակ թողած է սրնայոյ բանուած թագ մը:

ՍԱՐԳԻՍ ՎՐԴ.— Մբ. իր կենաց վերջին օրերուն գումար մը կը յանձնէ Կիպրոսաբնակ Հաճի Սիմէոն աղային՝ որպէս զի իր յիշատակին գնուի Լասիւնաք յիփրոյիկի կոչուած հողը որ Հայոց վանքին սահմանակից է, յիշեալ Սիմէոն կը գործադրէ Սարգիս վրդ. ի կտակը եւ կալուածը կը մատակարարէ, իբր վիւրթե-վեղի, բայց սեպհականութիւնը կառավարութեան տոմարին մէջ իր անձնականին արձանագրուած ըլլալով՝ իր մահէն յետոյ, որդին հաճի Յարութիւն բացարձակ տէր կը դառնայ, եւ զայն կը վաճառէ յոյներու (Կիպրոս, էջ 100): Սիմէոն աղա Գարբիէլ պտըք. ի օրով կը վարէր Կիպրոսի մէջ Ս. Աթոռի գան-ձապետութիւնը, (անդ. էջ 79), հետեւաբար Սարգիս վրդ. նոյն ժամանակի միաբաններէն մին կը նկատուի:

ՍԱՐԳԻՍ ՎՐԴ.— Մբ. թարգման, 1709ին ըստ հին հաշուե-տումարներու, նպաստով մը կը մասնակցի Ս. Յակոբի պարտ-քին վճարման:

ՍԱՐԳԻՍ ՎՐԴ. ՀԱԶԱՐԵՆՅ.— Առ. Հերմոնավանից. 1452 ին ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբ եւ Կոստանդին կթղ. Վահկացիին Ս. Յակոբի վանքին նուիրած մագաղաթեայ աւետա-րանը ինչպէս նաև եմիփորոն մը՝ որոնք գրաւի տակ կը մնային՝ կ'ազատէ և կը գնէ զանոնք ՋԱ. (=1452) թուին եւ դարձեալ կը նուիրէ Ս. Յակոբի վանքին, ձեռագիրը (ՄՁ. Թ. 251) կը գտնուի նոյն վանքին մատենադարանին մէջ, Հաղարենց վրդ. նոյն ձեռա-գիրին մէջ կը գրէ սոյն յիշատակարանը. «Թվ. ՋԱ. (=1452) զվեր-ջին ստացող սբ. աւետարանին զՍարգիս վրդ. Հաղարենց Հեր-մոնավանից՝ արևելից, որ գնեցի զսբ. աւետարանս եւ եմիփորոն մի ի գրաւէն. և եղի ինձ յիշատակ ի սբ. Յակոբ յեէմս. եւ որ ոք յանդգնի կամ գրաւ դնէ կամ ծախէ և հանէ զրանէ քս. ական աթոռոյս ինքն ջնջեսցի... եւլն.» : Ուրիշ ձեռագիր մը նոյնպէս գերութենէ ազատած ու վանքին նուիրած է (ՄՁ. Թ. 1950).